


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշխարիտ	հաւար
Տարեկան	12 ձր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի	
հաւար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Աւերիկայի	հաւար
Տարեկան	3 զր.
Վեցամսեայ	1.50 »

Ծանուցան յոյր առաջին երեսին հաւար 40 սխի վերջին երեսի հաւար 20 սանթրիմ է. երեքին աւելի անգամներու հաւար 20 0/0 գեղջ կրչայ:

Վստեայի հաւար մեկին 40 սանթրիմ



R. P. Kalémcarian, Mechitharistengasse (Autriche) W. 4. Vienne (Bulgarie)

Նախկին և նորապէս հարկաւորութեան հասցիքն:

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjume" (Bulgarie) Vienne

մեկին (20 ՍԱՆԹՐԻՄ) (Պաշխարիտ) հաւար մեկին (15 ՍԱՆԹՐԻՄ)

Գրութիւնք ևս չեն տրուիր

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇՄԱԲԹԻ ԵՒ ՇՄԱԲԹ ՕՐԵՐԸ

«ՇՄԱԲԹ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՐ Վ. ԿՍԵՆԻԿ ՎՃԱՐԷ

ՀԱՅ ԱԶԳԻՆ

Սիրոյ և յոյսի կըրօնքին փարած՝ Մոռցար փրկաւէս գէնքը դուն ափսոս. Ի զոր ներկեցիր այդ լայնատարած Դաշտերը՝ կարմիր, ո՛վ ազգ մարտիրոս:

Արեան ու վիշտի ծովուն մէջ կանգուն, Հըզօր հաւատքին սէգ ժայռը եղար. Յաւատանք գլխիդ վըրայէն անհուն Հեղեղներ անցան, տոկացիր դուն յար:

Բայց բա՛ւ, ո՛վ թշուառ, ա՛լ ոտք ելիր, Ալ հարկ է խզել շղթան դարեւոր. Թարմ ոգւով ձեռք ա՛ռ գէնքը յուսալիր, Յիշէ՛, անցնալը, փառքը հեռաւոր:

Չարթի՛ր ցընորքէն ան սալտամ յոյսին, Թէ քեզ պիտ օգնեն հըզօրները յամ. Անոնք մարդասպան գէնքն իրենց ուսին՝ Պիտ պարեն շուրջդ ժահէդ գիւնովցած:

Մի մոռնար, ինչպէս խըրոյտ ձըրանսան Ստորեկը եղաւ եսամոլ շահուն. Բռնակալ մը մեծ պահեց անսասան, Պագա՛ւ ոտները կայսեր մը գահուն:

Ուրեքնք է բոլոր, չէ՛, մի՛ հաւտարդուն, Թէ մեր ինքնազով դարուն մէջ ներկայ՝ Տկարի պաշտպան, զարգացած, գիտուն, Ազնիւ ու տիրող Եւրոպա մը կայ:

Ինքզինք Մեծ կոչող երկիր մը հըպարա, Անողոք հաշուին, իր շահուն համար. Ձեռնայ աշխարհի երեսէն անպարտ Համայնքի մ'աղուոր փառքը վե՛՛ իսպառ:

Ա՛լ մի վտահիր անգութ, նենգող, վատ Դիւանգէտներու դաւերուն ստոր. Եղբայրութիւն, գոյն, խղճմտանք, հաւատ, Մարդասիրութիւն կեղծիք են բոլոր:

Բարեկիրթ երկրի մի լիբե՛թագակիր Գրկեց գազանին փէշերը մըրօտ. Ու լիզեց անոր արիւնի կարմիր Փրփուրով ներկած շուրթը գարշահոտ:

Ճշմարտի քօղին ներքեւ պահուած՝ սուտ Մարդեր՝ են անոնք շահամոլ, վատթար, Իրաւունք ու սէր՝ երազներ են զուտ, Հըզօրն է այսօր միմիայն արդար:

Շարտէ՛ մէկ կողմ աղերսը խօլ, սին, Թօթուէ՛ իմրերը աղօթքին անհոգ. Երկնքին, երկրին հետը թող խօսին Ալ պայթիւնները գէնքիդ անողոք:

Չօրեղ է, գիտեմ, հաւատքիդ ոգին, Անով ապրեցար դարերով երկար. Հիմակ ալ հաւտա՛ կուսին ու գէնքին. Եւ կը՛ փրկելի՛ս մի՛ օր դուն իսպառ:

Վ Է Տ Ա

ՎԵՐԱԿԱԶՍԵԱԼ ՀՆՁԱԿ ԵԱՆ ՎԱՐԻՉՆԵՐԸ

Անշուշտ մեր ընթերցողները կարգացին հին հնչակեանների պաշտօնական յայտարարութիւնները վերակազմեալ հնչակեանութեան վարիչ և կարեւոր անդամների մասին:

Այդ պաշտօնական յայտարարութիւնը եկաւ հաստատելու որ վերակազմեալների կարեւոր անդամները գրեթէ առանց բացառութեան լրտեսներ, թուրք կառավարութիւնից հայ յեղափոխութիւնը տապալելու համար վարձված մարդիկ են եւ Մարդիկներ որոնց համար ոսկին, սարկութիւնը և դաւաճանութիւնը վեր են քան հայրենիքը և մարդկային բոլոր սրբութիւնները:

Մեղադրանքը այնքան սարսափելի է, մեղադրվողները այնքան բազմաթիւ, որ մարդ մի րոպէ վարանում է համաձայնել այդ պաշտօնական դատավճռի հետ, որովհետեւ դժուար է երեւակայել թէ մի յեղափոխական մարմնի զուլթը կաշող են անցնել այդպիսի ճիւղեր և կարող են գոյութիւն ունենալ այնպիսի ապուշներ, որ մինչեւ վերջին օրերս յանուն հայրենիքի շահերի հարստահարվել են այդ ճիւղերից: Բայց միւս կողմից էլ երբ աչքի առաջ ենք թերթում այդ ճիւղերի հրատարակած օրգանների ուղղութիւնը, գրախնդ մէջ գտնված յայտնի մատնիչներին, ուղած չուղած եղբակացնում ենք որ հին հնչակեանները արդարացի դատավճիռ են տւել իրենց երեկվայ ընկերներին և մեծ ծառայութիւն են մատուցանում մեր հայրենիքին իրենց այդ վճռողական քայլով:

Այո այսպէս լինելուց յետոյ, ամեն մի աչքիւ հայ պարտաւոր է զգուշութեամբ վերաբերվել գէպի վերակազմեալ Հնչակեան կազմակերպութիւնը, ու առանց վարանելու արհամարել այդ

մարմնի կեդրոնից նկատմամբ յանրին ու հրահանգները, որովհետեւ լրտեսներից ու դաւաճաններից կազմված վարչութեան բոլոր առաջարկները անպատճառ թելադրված պէտք է լինեն Սուլթանից և նրա կառավարութիւնից:

Մինչեւ օրս դանազան տեղերում վերակազմեալների կողմից կատարված մատնութիւնները և ստորնութիւնները մեզ համար միայն մասնաւոր նշանակութիւն ունէին, բայց այս պաշտօնական յայտարարութիւնը եկաւ հաստատելու որ վերակազմեալների մէջ մատնութիւնը սխալ է:

Այսուհետեւ վերակազմեալ վարիչների դոյութեան նպատակն է մատնել յեղափոխականներին և զրպարտութիւններով վարկաբեկել նրանց, Սուլթանի ծառաների համար ամենայնպէս պաշտօն և գործ:

Անշուշտ վերակազմեալների ժողովրդային տարրի մէջ գըտնվում են միամիտ հայեր, որոնք միայն զգացմունքով ապրելով ընդունակ չեն այդ ներքայած դաւաճանների պակասութիւնները նկատել: Ամեն մի ղանիմաց և աչքիւ հայ իր առաջին պարտականութիւնը պէտք է համարէ այդ միամիտների աչքերը բանալ, որպէս զի այդ խեղճերը իրենց արիւն քրտինքով ձեռք բերած լուծանքով Սուլթանի լրտեսների փորբերը չը պարարտացնեն:

ՎԱՐԴՕ

ՌՈՒՍԱԿԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ

Բէթերսպուրկէն «Ղէօրօբէէն»-ի կը գրեն հետեւեալը:

Ոստիկանութիւնը սարսափ տարածած է ամէն կողմ իր յարաճուն խուզարկութիւններով եւ ձերբակալութիւններով, որ կը կատարուին հանդէպ գրագէտներու, ուսանողներու եւ գործաւորներու: Երբ ոստիկանութիւնը կիմանայ թէ քան հոգի մը շափ մարդիկ հաւաքուեր են ու-

ասնորի մը կամ հրապարակաբար մը
տան մէջ խնդիրներ կը զարթոյն
ներկաներուն անունները կը նշա-

նակէ կամ թէ կը ձերբակալէ : Այս-
պէս խմբովին ձերբակալելով երբեմն
կը յաջողի անհատներու քովէն յե-
զափոխական հրատարակութիւններ
պատել և բարձրօրէն ձերբակալել :

Այս ձևով ձերբակալուածներու
մէջ կը գտնուին Լավրոֆի ազգիկն եւ
իր գոտարը : Նշանաւոր յեզափոխակա-

նին ազգակցութիւնը միակ պատ-
ճառն է այս ձերբակալութեան : Այս
հանդամանքէն օգտուելու են տիկին
Նէկէյէսով—Լավրոֆին բնակարանը
ծուղակի վերածելու համար : Հոս
ձերբակալուել են քանի մը մարդիկ ,
որոնց երկուքը Բարիզի մէջ բժշկու-
թիւն ունեւծ են եւ ծանօթ են եղած
տիկինին հետ :

Լուրեր կը պատին որ մեծաքանակ
ձերբակալութիւններ տեղի ունեցեր
են Թուրքիոյ , Գիւլի , Չէրնիքովի ,
Բէլգիլի եւ այլ քաղաքներու մէջ :
Վարսովայի չորս թատրոններու
մէջ միեւնոյն տանն հակակառավար-
ական ցոյցեր տեղի ունեցեր են :
Հարիւրաւոր մարդիկներ ազակակեր
են .—անկցի միապետութիւնը , կեց-
ցէ ազատութիւնը , եւ ժողովուրդը
հոռուայով պատասխանած է : Այդ
ցոյցը կազմակերպուել է ի պատիւ
1886 թուականին կախուած յեղափո-
խականներու : ԷՕի շաբաթ մարդիկ ձեր-
բակալուել են , որոնցմէ 20ը հե-
տեւեալ օրը ազատ արձակուել են :

Գրադէտ Սքիթալցը (Բէթրօֆ)
Գոթթրամա քաղաքին իր Մոսկովաի
մէջ կարգացած մէկ բանաստեղծու-
թեան համար , որ եւ սպաղրուեցաւ
«Մուրիէրի» մէջ : Առհասարակ քա-
ղաքական ցոյցերը եւ գրգռումները
կը շատնան :

Գրադէտ Վէրէսայէվի ազգական
տիկին Լէման Սմիտովիչ , անգամ մը
աքսորուած եւ փախած էր . քանի
մը ամիս առաջ Գիւլի մէջ կրկին
ձերբակալուեցաւ : Վերջերս բանտին
կը հանեն եւ ժանտարմաներու վար-
չութիւնը կը տանին հարցաքննելու
համար . հարցաքննութենէն վերջը տի-
կինը կը խնդրէ զինքը թողուն գոր-
ծարան երթալ : Կը թողուն . ու տիկինը
իսկոյն անտեղ կը նետէ իր վերար-
կուն , ակնոցները կը հանէ , գլխուն
ֆելչու մը կը դնէ ու դուրս կերլայ :
Ժանտարմաները չեն ճանչնար , ու
կը թողուն որ բակէն դուրս ելլայ :

Տիկինը հանդարտօրէն դուրս ել-
լալով իսկոյն կողք մը կը կանչէ
ու կանհետանայ :
Ժանտարմաները քսան վայրկեանէ
վերջը կը նկատեն տիկինին անհե-
տացումը : Իրար կանցնին . փողոցը
պատերազմի դաշտի կը վերածուի .
ամեն ինչ տակնուվրայ կըլլայ . բայց
ի գուր :

Խուզարկութիւնները դեռ կը շա-
րունակուին :

ՓՐԱՆՍԱՅԻՔ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Տարիէ մը աւելի է որ ֆրանսացի-
ները աւելի կը հետաքրքրին մեզմով
և մեր դատովը :

Բարիզի մէջ տեղի ունեցած վերջին
միթինգը , ուր հաւաքուած էին տար-
բեր կուսակցութիւններու պատկանող
նշանաւոր ֆրանսացիներ այդ հետա-
քրքրութեան և դէպի մեզ ունեցած

համակրութեան մէկ փայլուն նշանն
էր : Առաջ լոյս ֆրանսացի բարի ան-
հատներ էին որ մեզմով կը զարթոյնին .
այժմ այդ անհատները իրենց հետե-
ւող բազմութիւն մը ունին :

Մակայն այդ բոլորը մեզի վրայ ա-
ռանձին ազդեցութիւն մը չի գործե-
ր և պէտք չէ որ գործէ , որովհետեւ
ներկայիս քաղաքական խնդիրները
լուծելու համար ժողովրդային հա-
մակրութիւնները չեն որ վճռողական
դեր կը կատարեն , այլ կառավարու-
թեանց տրամադրութիւնները :

Ֆրանսական կառավարութիւնը առ
այժմ չը պիտի կրնայ մեզի համար
խիզախ դիրք մը բռնել թուրք կա-
ռավարութեան հանդէպ , որովհետեւ
անոր լաշակները Թուրքիա հանդուսակ
է մեր խնդրի մեզ համար նպաստա-
ւոր լուծման : Մակեդոնական խնդ-
րին նախաձեռնարկը ֆրանսական կա-
ռավարութիւնը եղաւ , ինչպէս կը
ցուցնէ Դեղին գիրքը և աւելի լուրջ
ծրագիր մը կտանջարկէր Մակեդոնիան
բարենորոգելու համար , սակայն
Թուրքիա ճիզմէները հաւաքեց մէջ մը-
տաւ , Ֆրանսան մէկ կողմ քննեց և ինք
Աւստրիոյ հետ միանալով վիժեցուց
մակեդոնական խնդիրը :

Ֆրանսա , իր դաշնակցին կծմիթը
ուտելով , սուսու փուս մէջ կողմ
կեցաւ իր ձեռնարկած դեղեցիկ գոր-
ծին փուզումը դիտելու դառնութեան
հետ :

Մտիկ արեւելքի մէջ Ֆրանսա ա-
ռանձինը բան մը չը պիտի կըզայ ը-
նել որովհետեւ իրեն կը հակառակի
իր դաշնակից ուսուր . ճնշարգոյն ա-
րեւելքի մէջ եւս , որովհետեւ հոն ալ
ուսուր գիւրքը , իր շահերը փրկելու
համար , իբր գործիք կը դարձան :
Ֆրանսայի խորհող մարդիկ այդ լաւ
զգացած են , զգացած է նաև մա-
մուլին մէկ մասը : Կզգան և Ֆրան-
սայի պետական մարդիկը , բայց ինչ
ընեն , համոզուած են որ իրենց հայ-
րենիքին շահերը առ այժմ կը պա-
հանջեն ուսուրն եկած լեզի հակերր
անվրդով կերպով կուլ տալ , մինչև
որ ժամանակները և Եւրոպայի քա-
ղաքական տրամադրութիւնները փոխ-
ուին :

ԹՐԲԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Սուլթան Համիտը իր բարեկամ
Վիլհելմ կայսեր խորհրդովը ա-
ռանց վայրկեան մը կորսնցնելու
ընդունեց Թուրքիոյ և Աւստրիոյ
մատուցած բարենորոգումներու
ծրագիրը , և առ չը բուեր յայ-
տարարեց որ բացի նշանակուած
երեք վիլայէթներէն ինք եւրո-
պական Թուրքիոյ միւս վիլայէթ-
ներուն մէջ ալ նոյն բարենորո-
գումները պիտի մտցնէ :

Իր փութկոտութիւնը ցոյց տա-
լու համար , Համիտը իսկոյն Հիւ-
մի փաշան , որ արդէն Մակեդո-
նիոյ ընդհանուր նահանգապետ
նշանակած էր , երեք սարով ,
ինչպէս երկու պետութեանց ծը-
րագիրը կը պահանջէ , գլխաւոր
վերահսկիչ նշանակեց . Բայց ե-
կուր տես որ այդ շատ ալ հաճելի
չեղաւ ուսու և աւստրիական կա-
ռավարութեանց , որովհետեւ ո և

է անձ մը գլխաւոր վերահսկիչ
նշանակելու համար անհրաժեշտ
էր ստանալ այդ կառավարու-
թիւններու համաձայնութիւնը :

Երկու պետութեանց ներկա-
յացուցիչները առանց յապտու-
մի բողոքեցին այդ զանցառու-
թեան դէմ և Սուլթանը ստիպ-
ուեցաւ Հիւմի փաշան հրատա-
րեցնել այդ նոր պաշտօնէն : Հի-
մա փնտառուքի մէջ է . Մակե-
դոնիոյ գլխաւոր կառավարչի յար-
մար անձ մը կորոնէ , որուն ընտ-
րութեան համաձայնին երկու
հովանաւորող պետութիւնները :

Սուլթանը , ծրագիրը ընդու-
նելով հանգրծ , ինչպէս կերե-
ւի որոշած է Մակեդոնիան իր
նախկին վիճակին մէջ պահել .
Որովհետեւ մեծ պատրաստու-
թեան մէջ է . ամեն օր Մակե-
դոնիա զօրք կը զրկուի . երի-
տասարդ կրթուած սպաներկանց-
նին վաշտերուն և դուռներուն
գլուխը , կամ թէ համոզուած լլ-
լալով որ Մակեդոնացիները չը
պիտի գոհանան շնորհած բա-
րենորոգումներով ու անպատճառ
պիտի ապստամբին , զօրքերու
թիւր կը շատցնէ Թուրքիոյ ու
Աւստրիայէ ապստամբները ճնշե-
լու համար ստացած արտօնու-
թիւնը կանոնաւոր զօրքելու մի-
ջոցաւ իրագործելու համար . Յու-
ռետետները կանն որ Սուլթան
Համիտ ակունքերը սրած է Մա-
կեդոնացիները լաւ մը շարքելու .
անոնց ապստամբած պարագային ,
որովհետեւ առ մասին քարթ պը-
լանչ ունի Թուրքիոյ և Աւստրիա-
յէ :

ՄԱԿԵՂՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԵՐ

Մինչ ուսու և աւստրիական դի-
ւանագետները իրենց ձեռքերը
կը շփեն գահունակութեամբ ,
կարծելով որ մակեդոնական խն-
դիրը քնացաւ ու կորցուց իր
սուր կերպարանքը , որովհետեւ
Սուլթանը մեծ հայտնագով ըն-
դունեց բարենորոգումներուն
ծրագիրը և պուլկար կառավարու-
թիւնն ալ , իր երկրին ապագա-
յէն վախճալով , ջնջեց մակեդո-
նական ընկերութիւնը , անդին
մակեդոնական խոռովութիւնները ,
գարնան հոտը փշուրն պէս , բ-
րենց արիւնտակիզը գրիւն :

Անցեալ օր հեռագիրը հաղոր-
դեց որ Պորիս Սարաֆօֆը հրո-
ստամբի մը գլուխ անցած ընդ-
հարում ունեցեր է թուրք կանո-
նաւոր զօրքերու և պաշտպոզու-
ներու շեռու լաւ շարք մը տա-
լով մնացորդը փախուցցեր է :

Մեր ընթերցողները ծանօթ
են Պորիս Սարաֆօֆին կորովին ու
եռանդին հետ : Ան նախագահ ե-
կամ միջոցին ցոյց տուաւ թէ
ինք անողորք և անխառն յեղա-

փոխական մ'է , ոս երբ գործի
սկսի անպատճառ պիտի աշխատի
այդ գործին յաջող ու փայլուն
ելք մը տալ :

Ի հարկէ Պուլկարիոյ մէջ ըրած
նախագահութեան և երկրին մէջ
յեղափոխութեան վարչի պաշ-
տօնին մէջ մեծ տարբերութիւն
կայ : Բայց Սարաֆօֆ անվախ , վճռա-
դական և ճարպիկ չինւորական
մը ըլլալով հաւանական է թէ
պիտի կարենայ ցնցել Մակեդո-
նիան և աւելի մեծ այսահանջներ
գնել Եւրոպայի առջեւ :

Սարաֆօֆի յաջողութեան կա-
րեւոր պարագաներէն մէկն ալ
պիտի ըլլայ ան , որ մեծ հա-
մակրութիւն կը վայելէ երկրին
ժողովրդին մէջ . իր ներկայու-
թիւնը անընկճելի պիտի դար-
ձնէ Մակեդոնացի ժողովրդին
այն մասը , որ կողբուողէր Սա-
րաֆօֆին անունը միայն լսելով :
Սարաֆօֆ միայն չէ Մակեդո-
նիոյ մէջ . հոն կը գտնուին և իր
հաւատարիմ ու սիրելի զինակից
ընկերները—Տալիսով և ուրի-
շներ :

Վճռողական , անվահեր , յեղա-
փոխական գործի մէջ կուտած կո-
փուած փունջ մը երիտասարդներ ,
որոնց հրահանգներով անցեալ
աշուն երկրի ներքին ուժերը տե-
պերէն չը շարժեցան , այս օր
ժամանակը կը համարեն Մակե-
դոնիայի մէջ գտնուող ուժերը
ուտքի հանել : Սուլթանի կոռավա-
րութեան և Եւրոպական դիւա-
նալիտութեան դէմ . Մեծ գործ .
մալթիներ օր յաջողին . եթէ չը
յաջողին ալ , նորէն պատիկ չը
պիտի իյնան , որովհետեւ իրենց
հակառակորդ պիտի ունենան ոչ
միայն Թուրքիան , այլ և երեք
խոշոր Եւրոպական պետութիւն-
ներ :

ԿԷՏ

ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԴԱՏԸ

— 0 —
Դ :

Պետական դատախազ պարոն
Մալինովի հիւանդ ըլլալուն պատ-
ճառով չի մասնակցիր դատախա-
րութեան . դատախազութիւնը կը
չարունակուի , անոր փոխանորդ Պ .
Խոտոբովին ներկայութեանը :

Կը հարցաքննուին կաշառ-
կերութեան մասին նշանակուած
վկանները : Նախարարները կը
մեղադրուին քանի մը դէպքերու
մէջ կաշառքներ պահանջած ըլ-
լալուն : Հակառակ վկանները ո-
րոշ կերպով չեն կրնար ըսել թէ
այսինչ կամ այն ինչ նախարարը
կաշառք ուղած է . այլ ըսի ը-
սաներու և ենթադրութիւն-
ներու վրայ հիմնուած կը խօսին :
Ամենէն մեծ կաշառքին խնդիրը
կը վերաբերի Վաւնայի քաղա-
փի ընկերութեան . իբր թէ այդ

ընկերութեան կաշառք տտանալու համար նախարարութիւնը միշտ աշխատած է խնդիրը ձգ-ձգել Հայրապետեան Միխայելովս քիի գործը Անանուն ընկերու- թեան յանձնելու համար:

Կաշառակերութեան մէջ կը մեղադրուի Ռատուլալօֆի աներ- ձագ Պրավատլիէֆ, որ իբր թէ շահագործած է իր ազգական նա- խարարին անունը ասկէ անկէ, որոնք պետութեան հետ ոնկ գործ մը ունին և անոր նպատարը կարգադրութիւն կը պահանջեն, կաշառքներ վերցնելով:

Դատաւարութիւնը պիտի պար- պէ Պրավատլիէֆին գերք աջգ աղ տուտ խնդիրներուն մէջ:

Դատախոսը Խօսածով ձայն համ- զուած ըլլալով որ պարոն Ապի- ինի չը պիտի կրնայ դատին մաս նակցիլ, ազգային ժողովին փոք- րագիր տուած է որ իրեն փոխ- կան մը ընտրեն:

Ինչպէս կերելի գատաւարու- թիւնը գիտ. երկու շաբաթէն ա- լելի պիտի տեսէ, որովհետեւ կնճռոտ հարցաքննութիւնները են որ սկսած են: Ինչպէս նախա- պէս խոստացած ենք, պիտի աշ- խատիր մեր ընթերցողներուն ամփոփ տեղեկութիւններ տալ եւ վերջին հարցաքննութիւններու մասին, միշտ աշխատելով կարե- տոր կէտերուն վրայ ծանրանալ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ռուստի 15 փետր. 1903

Ամսոյն 13 ին. Վարդանանց տոնին առթիւ, տեղւոյս արական վարժարանի սրահին մոջ, խուռն բազմութեան մը ներկայութեամբ տեղի ունեցաւ հանդէս մը, կազ- մակերպուած ուսուցչական մտրմ- նի ձևաբով: Ինկատեցի էր որ հանդիսականներու երեք քա- ոորդը իգական սեռը կը կազմէր: Այս երեւոյթը շատ աննպատ- փաստ մըն է Ռուստի հայու- թեան, որը կը պլանաց գէթ որ մը զօհել իր փառատը անցեալի անզօգական հերոսներու յիշա- տակին: Վաճառական և խոսնութ- պան գոտակարգը չէր ուղած գո- նի 2-3 ժամ հեռանալ իր չէրչի- ակն գնում հաշիւներէն և փու- թալ իր յարգանքը մատուցանե- լու Վարդանանի յիշատակին, որոնց քաջարի մահուան տարե- գարձը կը տօնէր այսօր հայ մա- ղաժուրդը:

Բացակայ էին նոյնպէս ազգ. երկսեռ վարժարաններու հոգա- բարձութիւնը և երիտասարդու- թեան զգալի մասը:

Սակայն գծապարար, այս անգամ ալ անաչառօրէն պէտք է խոստովանել որ հանդեսի գրա-

կան բաժինէն միայն յիշեալ ա- լելու արտասանող աշակերտը յաջող և գովելի բնութենակու- թեամբ կատարեց իր պերը: նոյնպէս ուսուցիչ պ. Վ. Յաքէս, եանը խնամքով պատրաստած ճառ մը կարգաց, ուր Մամիկոն- եան տոհմին և Աւարայրի անց- քերուն վրայ պատմական աչ- նարկ մը նետելէն յետոյ, շեշ- տեց նաև մեր վերջի 10-15 տար- ուան յեղափոխական կեանքի մէջ երեւցած, ազատութեան Ա. Ան- ղանին առջեւ նահատակող Վարդանանցի արժանաւորելի յարգանքը, որը սակայն տեղւոյս հայութեան նոյն ինչ երիտասարդ դասակարգի յանձնարարական համար գեղ անհամբաւելի ա- նըմբռնելի բան մըն է: Երգե- ցողութեան բաժինը մէկ խօսքով անյաջող էր: Այլ յատուկները և ոչ պուկար ուսուցչի առաջնորդու- թեամբ երկնայն երգերը երգու- եցան այնպէս ինչպէս կը սպաս- ուէր կամ պէտք էր ինչպէս նկա- տի ունենալով միևնոյն ժամա- նակ որ մեր խօսքի նիւթը աշա- կերտներն են: Երգեցիկ խումբի բացակայութիւնը կը փայլէր:

— Հայկական ընթերցարանը մէկ-մէկու կէս ամիս փակուած մնալէն յետոյ, քանի մը անհատ- ներու փութկոտութեամբ վերա- բացուեցաւ: Բայց, զարմանալին այն է որ, ընթերցարանի այս բարերարները փոխանակ ընդհ. ժողով մը դուժարելու և նոր վար- չութեան ընտրութեան մը ձեռ- նարկելու՝ յայտարարած են զի- բենք զեկավարող մարմին և սկսած զանազան անմիտ տնօրէ- նութիւններ ընել: Ինչպէս կը լինեք հաւաստի ազգիւրներէ, այս նոր ինքնակոչ վարչութիւնը զեռ իր առաջին նիստին մէջ ամենայնիմար և յանցաւոր քայլ մը առած է ուժեղութիւնը Երգ- յիւր արգիլել երգեցողութեան փորձերը գիշերները ընթերցա- սրահին մէջ կատարելու: Վար- չութիւնը արդեօք ինչ ծրագ- րով, մասնավոր և իրաւունքով թոյլ տուած է իրեն խոչնդատ դառնալ ազգ. նորածիր բարեկա- տակ խումբի մը, որը իր գոյու- թեան կարճ շրջանին իր թոյլ և սահմանափակ ուժերով, տեղւոյս գրեթէ ազգ. բոլոր հաստատու- թիւններուն օգտակար հանգի- սացաւ:

Տրամօ. քօմիտեան Վ. Ե. Օ. Լ. Օ հայ խումբը մէկ ամիսէն ի վեր այստեղ է և Սանդրալի մէջ շաբաթը 2-3 ներկայացումներ կուտայ, բայց մինչեւ այժմ ոչ մէկ լուրջ արած չէ ներկայացու- ցած: Երկուսի կարելի ըլլար խումբի ուժերուն վրայ ցաղա- փար մը կազմել և երգեցիկ խում- քի մասին աննպատաւ արածայ- նութիւններ կը պտտին: Պիտի

կազմալուծուի եղեր: Ամօթ տեղ- ւոյս երիտասարդութեան, եթէ չը կարողանայ բարձրացնել այս- պիտի ազնիւ ձեռնարկ մը:

Յաջորդ. թղթակցութեամբ «Վ. Օ. Լ. Օ»-ի, երգեցիկ խմբի և և անկապարտելի մասին:

ՍՈՒՐԷՆ

ՈՒՍՏԸ

Հայ ուրբուր

ԳՈՅՐԸ

Կը յիշեմ, եղբայր, մեր գիւղական աւաղ, Ուր մենք կապրէինք անդորր ու խաղաղ Մեր բերրի դաշտեր, հովիտներ կանաչ Մաղկունք սփռած չորս կողմ ձախ և աջ:

ԵՂՐԱՅՐԸ

Կը յիշեմ, այո՛, ո՛վ քոյր իմ քնքճը, Նեշտաւք բոլոր անցեալին անուշ Մեր հայրը զարթոյց մեր մայրը կը վէս Անա կը քալեն կանցնին առջեւս:

ԳՈՅՐԸ

Կը յիշեմ մեր ժեր գառնուկ- ներն ուրախ Ինչպէս մայրէն վազէին փարախ կեանքը մեզ համար երկիր մէջ կապոյտ

ԵՂՐԱՅՐԸ

Ուր կը ճախրէինք զուարթ և անփոյթ, Ուր կանք է, քոյր իմ, կարծել թէ երբէք, Երկինք էր կեանքը հայուն վտարեկ Մենք սպասէինք անգետ տակաւին Հայ կեանքի փուշին, թոյնին ու ցաւին

Չե՞ս յիշեր թուրք մը երբ կուգար մեր գիւղ Ինչպէ՛ս աջ ու ձախ կը տիրէր եր- կիւղ Ինչպէ՛ս չէ՞ք մայրըս հիւանդ տեն- զահար Մանուկի մը պէս վախէն կը դողալ եւ հայրըս ինչպէ՛ս կը վազէր չորս կողմ

Բերել ինչ որ կայ, իւր, հաւկիթ ու հաւ Չի վա՛յ գեղջուրին եթէ անողորմ Չիւնորին ի՞նչքը անկատար եղաւ:

ԳՈՅՐԸ

Բայց ինձ կը թուի թէ հայ որբ տղոց կեանքին այս ճամբան աւելի է քարոտ Երբ անոնք մօր մը համար ինչ կա- րօտ Տրտում կը չըլին փողոցէ փողոց, — Ո՛վ պաշտելի մայր, քարը քու շիրմին

Տնայալէ՛ մէկդի և ելիր ու տես թէ որբը ո՛րքան կարօտցած է քեզ Ինչպէ՛ս կը մաշի մատողա իր մար- մին, Եւ դո՛ւն ալ միթէ չունիս գուժ Ստուած Եւ ի՞նչ փոքրիկներ վրտի ես մատ- նած

Ի՞նչ էր մեր մեղքը, ի՞նչ էր մեր յանցանք Որ Դրժոյթէ՞ք ներս դեռ այժմէն անցանք:

ԵՂՐԱՅՐԸ

Մի դիտե՛ր, քոյր իմ, երկին մ'անիծեր, Մենք շա՛տ մեղք ունինք, որ մա- նուկ ու ծեր կորւ չը մղած՝ մեր ազգը համայն Պարերէ ի վեր աղօթեց միայն, Յիշէ քերտերը, թուրքը մոռեկան Որ երբ բիրերով մեր վերան հնկան, Հայրըս ճիտը ծուռ, կարծես մի տղայ», Կուլար, կը գոչէր. «գըթացէ՛ք աղայ»:

ԳՈՅՐԸ

Եւ ինչո՞ւ լուռ մտնիլ տղու պէս ինկան Առանց կուսակց ժէ՛ր տաք արեան, Ինչո՞ւ չընտրեցին զէնք իրենց պաշտպան, Հարուած մը գէթ տալ կեանքի մը փոխան:

ԵՂՐԱՅՐԸ

Դարերով ազգը, մեր հայրը, մեր պապ Ապրեցան թշուառ՝ միշտ շղթայա- կապ,

Օտար տիրողի խոնարհ ստրուկներ, Չունեցան, ախտո՛ս, զէնքի, կոտի սէր:

Յուսացին անոնք, թէ կե՛ղծ եւրո- պան Պիտ՝ յարգէր հայուն տըւած իր մուրհակ,

Եւ բռնակալին բիրտ լախտն ու մահակ Դարձուց երկիրը անապատ խոսպան, Իրգական պետեր, անխիղճ և ան- սիրտ,

Իանդեցին գիւղեր՝ հարուածներով բիրտ, Եւ մեր մարդիկը՝ այր, տըղայ, թէ կին՝

Մուռը աղօթք մը լո՛կ խրկեցին երկին:

ԳՈՅՐԸ

Կը յիշեմ, այո՛, անտառը մօտիկ, Ուր փախանք վախէն ընկրով մըտիկ Չայները զէնքի, պայթիւնները գոռ, Այրող տուններուն փլուլը բոլոր:

ԵՂՐԱՅՐԸ

Երբ երեք օրէն ետ զարձանք անկէց, Մեր մանուկ հոգւոյն սարսափ մը արեց:

Լուած էր գիւղը, սև մուխ մը միայն Դէ՛ս մաւրտ երկին կը ձրգուէր երկայն:

ԳՈՅՐԸ

Բայց փըլատակաց տակէն զէգող է՞՞ Բոցեր ժոյթ քեցան շիտակ զէպի մեզ, Չայն տըւին անոնք անեղ ձայն մը գոռ:

Եւ հոն որտաց այս խըրոխա յորգոր, Եւրէ՛ժ, կօի՛ւ, հայ տղաք, Մահուան զէ՛մը մի դողաք, Հայ կարիճներ եղի՛ք սէգ, Օր մը վըրէ՛ժ պիտ՝ լուծէք, Հիմա գուցէ հեռանաք՝ Այս վայրերէն տիրուակ, Բայց յիշեցէ՛ք դուք մի օր Այս յորդորը ահաւոր:

Եւ ուխտեցէք ուխտը մեծ,
Օգնել երկրին տրտմանեծ:

ԵՂՐԱՅՐԸ

Ուրեմն, քոյր իմ, ե՛կ ուխտ ընենք
հոս արի՛, Յանուն հայու արեւնաներկ վեհասարկ
Ու թող լըսէ աշխարհ համայն ու
երկին
Մեր սրբ. ուխտը, ուխտը որքին ու
մերկին.
Անգուժ կըրիւ ըլլայ անդարձ մեր
վըճիւն.
Թող չգործեն ա՛լ անպատիժ սև ոճիւր:
Չէր սանջլըէր հայրենիքը ձեզ
դարեր,
Եթէ ամեն հայ իր պարտքը կա-
տարէր:
Թող ուխտը ամ ըլլան զինւած բո-
ղոքին:
Այժմէն մանուկ մեր սիրտ, մարմին
մեր հոգին,
Ա՛լ լեռ անտառ հայ զէնքերէն թող
թնդան,
Ա՛լ փրկուի թող ցանկալի Հայաստան:

ԳՈՅՐԸ

Ուխտենք, երկին թըրի մեր սուրբ
ուխտը թող,
Ձինջ կապոյտէն փայտապէս զէս
ու զէն,
Եւ հոն վերը, արարչային վեհ
չորթէն
Կախուած շանթ ո՛ր գողցես, սքփո՛ւէ
ա՛հ ու գող.
Ձի մեր ուխտը արցունքներով լը-
ւացուած՝
Իբրեւ աւանդ պիտի պահէ ինք
Աստուած:
ՎԷՏԱ.

ԻՏԱԼԻԱ ԵՒ ՄԱԿԵՒՈՒՆԻԱ

Քանի մը եւրոպական թեր-
թեր հաղորդեցին որ Կարի-
պալտիանները կը պատրաստուին
արշաւանք մը ընել զէպի Ալպա-
նիա և Մակեդոնիա:

«Լէօօրօքիէն» աշխատակից-
ներէն մին տեսակցութիւն մը
ունեցեր է Մէնօթի Կարիպալ-
տիին հետ, և արտօնուած է յայ-
տարարելու այդ լուրերը հեր-
քելու, մտնաւանդ ինչ որ կը վե-
րաբերի Ալպանիայի:

Իսկ ինչ կը վերաբերի Մակե-
դոնիայի, կսպասեն: Չին Կա-
րիպալտեան գնդապետ մը ըսեր
է. — Ողջ աշխարհը համոզուած է
թէ արեւելքի մէջ խոշոր գէպ-
քեր պիտի պատահին. և անկա-
րելի չէ որ յողիթական կարմիր
շապիկը հաւատարիմ իր աւան-
դութիւններուն, երեւան չելլայ
պալքաններուն մէջ ճնշեալները
պաշտպանելու համար: Կըսուի
թէ. Րիչիօգի Կարէպալտին
պատրաստ է նորէն կրակ թափել
թուրքերու զլխուն, ինչպէս կու-
ղէր ընել Ասիոյ մէջ:

Երբեմնի ընկերվարական,
այժմս արմատական երեսփոխան
և ընկերաբանութեան բրօքէսօր.
Մարինիս որ և շատ տեղեակ է
արտաքին գործերուն հրապարա-
կագրի մը հետ ունեցած տեսակ

ցութեան մը միջոցին, մակե-
դոնական խնդրի մասին յայտա-
րարած է թէ ըստ իրեն Սուլթանը
եթէ բարենորոգումներու ծրա-
գիրը ընդունի ալ, խնդրը նո-
րէն լուծելի պիտի մնայ, որով-
հետեւ անոնք երբէք չը պիտի
գործադրուին: Իր կարծիքով
պալքաններու մէջ պատերազմը
անխուսափելի է և միայն ժամա-
նակի խնդիր և եթէ այս քար-
նան չըլլայ, ուրիշ ատեն մը պի-
տի ըլլայ: Իսոյն անհրաժեշտա-
բար Մակեդոնիան պիտի թուր-
քիան խլուի, որը և վերջը պի-
տի գնէ թուրքիոյ եւրոպական
տիրապետութեան:

Քաղաքական շրջանակներու մէջ
չատ կը կասկածին որ Ռուսիա և
Աւստրիա կարենան խաղաղու-
թիւնը պահպանել պալքաններու
մէջ: Կը հարցուի թէ Ռուսա-
սանը ի՞նչ գիրք պիտի բռնէ
Խուրքիոյ հանգէպ: Իտալացիք
չատ համակիր են զէպի յոյները.
Յունաստանի թուրքիոյ հետ միա-
նալու և Մակեդոնիայի ազատու-
թեան արգելք հանդիսանալու
լուրը շատ զէջ տպաւորութիւն
գործած է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Պօլսէն կը հաղորդեն որ կա-
ռավարութիւնը որոշած է խիստ
միջոցներ ձեռք առնել ալպանա-
ցիները, մանուանդ կաթոլիկ,
ճնշելու համար: Ան այժմ Էսսատ
փաշան պիտի ժանտարմաներու
պետ նշանակուի, երկու աւազա-
կապետ Օսման Օքերի և Սէլիմ
Պէկասին հնազանդեցնելու հա-
մար:

— Պոլսոյ մէջ ոստիկանութեան
և զօրքի հետ կոռուզ խումբը
Մակեդոնացիներ չեն այլ թուր-
քերէ և յոյներէ կազմուած սոսկ
աւազակախումբ մը:

— Անգլիական կարեւոր թերթ
մը կը հաղորդէ որ թուրքիան
մտադիր է Պէլճիքայի կառավա-
րութեան հետ բանակցութեան
սկսել, որպէսզի 30 սպանել զը-
կուին Մակեդոնիոյ ժանտարմա-
ներուն պետեր կտրուելու հա-
մար: Պէլճիքայի թագաւորը պատ-
րաստ է Սուլթանի փափաքին
գոհացում տալ:

— Մովսիսին նախարար իր գո-
ղութիւններով հռչակաւոր Հասան
փաշան հիւանդ է:

— Գերմանական թերթ մը կը
հաղորդէ որ թուրքիա կը պատ-
րաստուի ոչ թէ պատերազմի հա-
մար, այլ հին կուսակցութիւնը
որ պատերազմ կուզէ խաբելու և
պալքանեան փորքիկ պետու-
թիւնները սարսափեցնելու հա-
մար:

ՊՈՒԼԿԱՐԻԱ.—ՄԱԿԵՒՈՒՆԻԱ

Ընթերցողները գիտեն թէ Սօ-
ֆիայի մէջ գոչուած ու կնքուած
էր այն շինութիւնը ուր կը գտ-
նուէր Մ. Բ. կօմիտէի պիւրօն:
Անցեալ օր ներքին գործոց նա-
րարի հրամանով, քաղաքապե-
տը իր քանի մը ստորապատեալ-
ներով կերթայ կնիքը քակելու
և շինութիւնը պարպելու որպէս-
զի վարձը չը բանի: Պաշտօնեա-
ները ներս մտնելով կը սարսա-
փին: Դրամարկղը և բոլոր դա-
րունները պարագայ կը գտնան.
Սենեակներուն մէջ պարագու-
թիւն և անկարգութիւն կը տիրէ:
Այդ գողութեան զանազան բա-
ցատրութիւններ կը տրուին:

— Աւստրիայի նախարարպետն
ալ երեսփոխանական ժողովին
մէջ յայտարարած է որ եթէ Մա-
կեդոնացիները չը գոհանան ներ-
կայ բարենորոգումներով և ա-
պստամբին, Սուլթանը ազատ
պիտի ըլլայ զանոնք ամենախիստ
միջոցներով ճնշելու:

— Հինգ շաբթի օր ութ կառք
գրաւուած հրացաններ բերեր են
Սօֆիա: Հրացանները սահմա-
նազրկի ոստիկանութիւնը գրա-
ւեր է այն Մակեդոնացիներէն ու-
րոնք սահմանը անցնել կը պատ-
րաստուին եզեր:

— Պուլկարիոյ սզգային ժողո-
վը մերժեր է պատերազմական
նախարարին պահանջած տաս մի-
լիօն ֆրանքի վարկը:

ՆՄԱԿԱՏՈՒՓ

Մեզ դիմող վառնացի պարոններուն.
Մենք չենք գիտեր թէ Որբա-
խնամի պատրաստի դրամները
ուր կը պահուին. չենք գիտեր
նաև թէ ի՞նչու «Իրաւունք» ի
խմբագիրը խոստանալով հանդերձ
իրեն տրուած հարցին պատաս-
խան տալը բախնամի դրամներու
մասին, մինչեւ այժմ լուռ կե-
ցած է: Ձը գիտենք նաև թէ ին-
չու որբախնամի վարչութիւնը
մինչեւ օրս չէ գրկած վերջին
ներկայացումէն դպրոցին հաս-
նելիք դրամը: Մենք Որբախնա-
մի հետ ու է յարաբերութիւն
չունինք: «Իրաւունք» ի խմբա-
գիրը ամենէն ազէկը գիտէ, ու
կրկին հոն գիմեցէք:

Ա Ձ Դ

Խորհուրդս ստացած է նաև
Բօթիէ յունվար 20 թուակիր մի
նամակաւ երէցփոխ տիրար Ա.
Վրդանէսեանի միջոցաւ 140 րպլ.
արգիւնք նոյն քաղաքի մէջ կա-
տարուած հանգանակութեան:
Խնդրելով որ հաճիք վերոգր-
եալն հրատարակել ձեր պատուա-

կան թերթին յատաշիկայ թուոյն
մէջ:

Կը մնամք յարգանօք
Ի դիմաց Թաղական խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Ս. Գարիբեդեան Յ. Մ. Թովմասեան
Վառնա, 21 փետրվար 1903

Կը խնդրուի պատուարժան
խմբագրութեանց որ հաճէիք ազ-
գօգուտ թերթի մօտակայ թիւ
բէն միոյն մէջ հրատարակել
ներփակ ցանկերը. որոնք շարու-
նակութիւնն են քաղաքիս մէջ
ազգային կալուածի մը գնումէն
գոյացած պարտքին բարձման
համար ձեռնարկուած հանդանա-
կութեան(»):

Կանխաւ յայտնելով մեր շնոր-
հակալիքը

Մնամք յարգանօք
Ի դիմաց պարտուց բարձման
Յանձնախմբի Ատենապետ
Ստեփան Մարտիկ Մարտեան

(»)Մ. Ս. Տպագրելով այս նամակը կը
յայտարարենք որ ցանկը շատ երկար
ըլլալով չը պիտի կրնանք հրատարա-
կել:

ՅՐԱՆՍԱՅԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՎԻՊԻՍԱՆ-
ՆԵՐԷՆ Լ Ո Ւ Ի Ն Ո Ւ Ա Ռ Ի

ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԴՈՒԿԸ
Գերազանցապէս հետաքրքրաշարժ
Առաջին մասը լրացաւ

Երկրորդ հատորը սկսու հատարակ-
ուի:

Ամէն դասակարգի զիրամատչելի
ըլլալու համար գիրքը երկու մասով
երևան կելլայ (մէկ հատորի մէջ) և
ամբողջութիւնը 52-54 թերթերէ պի-
տի բաղկանայ:

Իւրաքանչիւր մասին բաժանորդա-
գիրն է՝ Վառնայի համար 1, 25. ու-
րիշ քաղաքներու և արտասահմանի՝
1, 50. Իսկ ամբողջութեանը բաժնե-
գիրն է՝ Վառնայի համար 2, 50. և
Վառնայէ դուրս 3 ֆր. ձեռքէ առ-
նողները պիտի վճարեն առաջուան
պէս՝ 8 երեսնոց արկիւն՝ 5 սանդղի:

Այն քաղաքները և կամ գիւղերը
որ մէկէ աւելի բաժանորդ ունինք,
միայն մէկ հասցէի տմէն շարաթ եր-
կու պրակը մէկ ծրարով պիտի դը-
կուի, իսկ առանձին բաժանորդի
պրակները 6 հատը մէկ ծրարով պի-
տի դրկուի փոսթի ծախքը հրատա-
րակչին վրայ է:

Փափաղողները պէտք է դիմեն հե-
տեւեալ հասցէին՝
imprimerie Orientale, Onnik
Parseghian Varna
Դրամի փոխարէն նամակագրով պի
կընդունուի:

ՔՈՒՉՍԿ

Նահապետ Գուշակի յաղերը պա-
րունակող գիրքը որուն կցուած է
նաև Ա. Չօպանեանի մէկ ընդարձակ
ուսումնասիրութիւնը, կը ծախուի
Չարպանէիէն գրատունը Վառնա
Դիմէ՛ պարզ թղթէ գիրքին 3 ֆր.
Գուշէ՛ » 5 »
Կարծէ որ ամէն բանասէր և հա-
գրականութեան սիրահար անձ ունե-
նայ այս գրքէն որ ճշմարտապէս զը-
րական գոհօր մըն է:

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варна